ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Ուսումնական կենտրոն

# Ուսումնական ծրագիր
# Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան» որակավորման «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի դասընթացի

Քննարկվել և հաստատվել է
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ուսումնական կենտրոնի «Ընդհանուր
պատրաստականություն» կրթաճյուղի
01.06.2018 թ-ի թիվ 4 նիստում

Ք.Երևան 2018

# ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

**Նախնական մասնագիտական կրթության «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի եռամսյա դասընթացի**

| Թեմա N | Թեմաների անվանում | ժամաքա-նակն ըստ թեմաների | ժամաքանակը ըստ պարապմունքի ձևերի | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դասախոս. | գործն. | սեմ. |
| 1 | Արտակարգ իրավիճակների դասակարգումը:<br>ՀՀ տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակները: | 2 | 2 | | |
| 2 | Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պետական միասնական համակարգը: | 2 | 2 | | |
| 3 | Զանգվածային ոչնչացման զենքերի հիմնական տեսակները և դրանց բնութագրերը: Արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության հիմնական միջոցները: | 2 | 2 | | |
| 4 | Ոստիկանության մարմինների խնդիրներն ու գործողությունները արտակարգ իրավիճակների պայմաններում: | 4 | 2 | | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **10** | **8** | | **2** |

Կազմեց՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի ավագ դասախոս,ոստիկաության փոխգնդապետ

_____ Խ. Թովմասյան

Քննարկվել և հաստատվել է
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի նիստում առձանագրություն թիվ 4
01.06.2018 թ.
կրթաճյուղի պետ,ոստիկաության փոխգնդապետ

_____ Ա.Ալեքսանյան

## 1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան առարկայի ուսումնասիրման համար հատկացված է 10ժամ, որից՝

- դասախոսություն- 8ժամ
- սեմինար - 2ժամ

## 2. «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր » դասընթացի ուսուցման նպատակները և խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է սովորողների մոտ ձևավորել տարաբնույթ արտակարգ իրավիճակների ժամանակ անհրաժեշտ վարքի կանոնների իմացության հմտություններ և կարողություններ: Տիրապետել ոստիկանության խնդիրներին և գործառույթներին արտակարգ իրավիճակներում:

Առարկայի դասավանդման ընթացքում լուծվում են մասնագիտական ուսուցման

հետևյալ խնդիրները.

1. Ծանոթացնել քաղ. պաշտպանության և արտակարգ իրավիճակների համակարգի խնդիրներին և գործառութներին, տալ հակիրճ տեղեկություններ արտակարգ իրավիճակների դասակարգման և կանխարգելման ուղիների, բնակչության պաշտպանության կազմակերպման մասին:
2. Տեսական գիտելիքներ հաղորդել ՀՀ-ում առավել հավանական բնական և տեխնածին աղետների, կենցաղային վթարների, պատահարների, բնութագրի առաջացման պատճառների և այդ իրավիճակներում վարքի կանոնների վերաբերյալ:
3. Ձևավորել արտակարգ իրավիճակներում ծառայողական գործողությունների մասնագիտական պատրաստվածություն:

## 3.Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

1. Ներկայացնել քաղ. պաշտպանության և արտակարգ իրավիճակների համակարգի, այդ թվում ոստիկանության խնդիրները ու գործողությունները
2. Բնութագրել և դասակարգել արտակարգ իրավիճակները
3. Բնութագրել ՀՀ-ում հնարավոր արտակարգ իրավիճակները, նրանց առաջացման պատճառները, կանխարգելման ուղիները
4. Կիրառել անհրաժեշտ վարքի կանոններ արտակարգ իրավիճակների ժամանակ
5. Տիրապետել զագվածային ոչնչացման զենքից պաշտպանվելու եղանակներին
6. Ներկայացնել արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ կիրառվող ձևերը ուղղված բնակչության պաշտպանությանը
7. Տիրապետել աղետի գոտում, օրենքով սահմանված կարգով, ոստիկանի իրավունքներին, պարտականություններին

## 4 Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ դասընթացների հետ

Դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ ինչպիսիք են «Ծառայության իրականացման մարտավարություն», «Հատուկ տեխնիկա», «Անվտանգություն և առաջին օգնություն», «Կրակային պատրաստականություն» առարկաները:

## 5. Առարկայի ուսուցման մեթոդական ցուցումներ

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների և սեմինար պարապմունքի տեսքով, որոնք անց են կացվում ինտերակտիվ մեթոդներով: Դասավանդման ընթացքում օգտագործվում են նաև տեխնիկական միջոցներ, տեսանյութեր:

## 6. Ուսումնական նյութի բովանդակությունը

***Թեմա 1*** **Արտակարգ իրավիճակների դասակարգումը: ՀՀ տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակները:**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

1. Արտակարգ իրավիճակների հասկացությունը, սահմանումը
2. Արտակարգ իրավիճակների դասակարգումը
3. ՀՀ –ում արտակարգ իրավիճակների դասակարգումը ըստ իրենց հիմքում ընկած երևույթի բնույթի
4. Բնական բնույթի արտակարգ իրավիճակներ
5. Տեխնոծին բնույթի արտակարգ իրավիճակներ
6. Բնապահպանական /էկոլոգիական/ բնույթի արտակարգ իրավիճակներ
7. Արտակարգ իրավիճակներ՝ կապված հիվանդացումների, գյուղատնտեսական վնասատուների հետ

**Թեմա 2 Արտակարգ իրավիճակում բնակչության պաշտպանության պետական միասնական համակարգը**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը

1. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պետական միասնական համակարգը, որպես պետության անվտանգության ապահովման բաղկացուցիչ մաս
2. Համակարգի կառուցվածքը և խնդիրները
3. Բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումները, սկզբունքները և ձևերը
4. Բնակչության տարահանումը
5. Փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ

**Թեմա 3 Զանգվածային ոչնչացնում զենքերի հիմնական տեսակները և դրանց բնութագրերը: Արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության միջոցները:**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը

1. Միջուկային զենք
2. Քիմիական զենք
3. Կենսաբանական զենք
4. Հարձակման սովորական միջոցներ
5. Արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության հիմնական միջոցները
6. Անհատական պաշտպանության հիմնական միջոցները

**<u>Թեմա 4</u> Ոստիկանության մարմինների խնդիրներն ու գործողությունները արտակարգ իրավիճակների պայմաններում**

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը

1. Ոստիկանության պարտականությունները և իրավունքները արտակարգ իրավիճակների պայմաններում
2. Արտակարգ իրավիճակներում ոստիկանությունում կազմավորվող վերակարգերը և խմբերը
3. Ոստիկանության գործողությունները արտակարգ իրավիճակների պայմաններում /երկրաշարժ, քիմիական ճառագայթային վարակումներ, ջրհեղեղներ, հրդեհներ/

## Գրականության ցանկ


1. «Քաղաքացիական պաշտպանության մասին » ՀՀ օրենքը, 2002թ.
2.« Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ . օրենք 1998թ
3. «Ռազմական և արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների մասին», Երևան 2001թ.
4. Ռազմագիտության դասագիք, Երևան 2001թ.
5. Ոստիկանության մասին ՀՀ օրենքը, 2001թ.
6. ՀՀ կառավարության առընթեր արտակարգ իրավիճակների վարչության ճգնաժամային կառավարման ինստիտուտ «Աղետների կառավարման հիմնահարցեր» ուսումնական ձեռնարկ 2002թ.
7. Гранжданская оборона СССР «Это должен знать и уметь каждый» 1985г.